



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material



Ա. ՊՈԿՐՈՎՅԱՆԻ

ԹԵՏԵՐԱԾ

ՅԵՐԵՎԱՆ



Հ. Ս. Խ. Հ. ՍՈՑԴԱՍՎԱՐ  
ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Վ. ՊՈԿՐՈՎԸՆԻ

# ՈՒՆԳԱՐԿԱ

(ՊԱՏՄՎԱԾՔ)

Թարգմ. ԱԻՄԱԿ

A I 8496



ՊԵՏԱԿԱՆ ԶՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՎՐԵՎԱՆ 1930



Հրատ. № 1317

Գրառեալ. № 5217 (բ) Պատ. № 592 Տիրաժ 3000

---

Պետհրատի լերկըորդ տպարան Յեղեանում.

\* \* \*

Ունգարկան—դա կիրգիզ յերեխա յեւ Նա  
ծնվել ու մեծացել և Արենլուրգի նահանգի լայն  
ու արձակ տափաստանում, թափառական կիր-  
գիզների Փոքր Տափաստան շրջանում։

Այստեղ, ուր Ուրալի վտակ հրաշագեղ ի-  
ւեկ գեան և հոսում, այստեղ և Ունգարկայի  
հայրենի առւլ (գյուղ) Կուերգարկին Ուգոլը։

Փոքր Տափաստանի թափառական կիրգիզ-  
ների մյուս բոլոր գյուղերի նման Կուերգարկին  
Ուգոլի կուրամներն ել (Ճմեռային շենքերը)  
դանվում են Իլեկի ձախ ափին։ Առւների դի-  
մացը—աջ ափին յերկար գծի նման ձգվում են  
կազակների գյուղերն ու ավանները, ուր բնակ-  
վում են կիրգիզիայի տափաստանը նվաճողները՝  
սահմանապահ կազակները։

Կար ժամանակ, յերբ կազակները տեր եյին  
Իլեկի թե աջ, թե ձախ ափերին ու իրենց հո-  
տերն առած թափառում եյին ամբողջ տափաս-  
տանում։ Իսկ յերբ ցարի պետությանը հող  
պետք յեղավ կալվածատիրական կենտրոնական  
նահանգներից գյուղացիներին արտաքսելու հա-

մար, ապա վորոշվեց զբավել Կիրգիզիայի ընդարձակ ու ազատ Տափաստանը:

Կիրգիզները միանդամից չհպատակվեցին: Յերկար տարիներ Որդան ըմբոստանում եր, մինչև վոր վերջնականապես ընկճվեց, հաշտվեց, խաղաղվեց: Անհաշտները գնացին Իլեկից հեռու՝ տափաստանի խորքը ու այնտեղ կազմեցին Հեռավոր Որդա, իսկ Իլեկի ափին ընակվողները՝ Մերձավոր Որդա:

Շատ սակավ, ու այն ել միայն վերջին տարիներում, հեռավոր-որդացիներն սկսեցին յերեալ կազակների ընակավայրերում: Նրանք միշտ խուսափում եյին կազակներից: Կազակները միշտ վախենում եյին հեռավոր-որդացիներից: Հեռավոր-որդացիները միշտ իրենց խիստ ու անկախ եյին պահում:

Հեռավոր-որդացիներն զբաղվում են բացառապես անասնապահությամբ. Նրանք մշտապես թափառում են ընդարձակ տափաստանում:

Մերձավոր-որդացիների և կազակների միջև կամաց-կամաց սերտ ու խաղաղ հարաբերություն ստեղծվեց:

Մերձավոր-որդացիները կազակների որինակով շուտով սկսեցին վոչ միայն անասնապահությամբ զբաղվել, այլ և հողագործությամբ:

Բայզուշները (չքավոր կիրգիզները) սկսե-

յին հարուստ կազակների մոտ աշխատել իբրև  
բանվորներ և շատ ավելի հաճախ—իբրև հովիվ-  
ներ:

Ունգարկայի աթան (հայրը) և անան  
(մայրը) չեցին մտածում, վոր իրենց սիրեցյալ  
ու միակ վորդին ստիպված պետք ե լինի մի  
ժամանակ գնալ ուռուսի (ռուսների) մոտ—ա-  
նասուններ արածեցնելու...

Մինչ ութ տարեկան հասակն Ունգարկան  
ապրում եր իր Ռւդլայնում ազատ ու յերջանիկ:

Սև եր, ինչպես աղբային բգեղը, ամուր ու  
պինդ, ինչպես մատղաշ ծփի ծառը, շարժուն,  
ինչպես սատանի ճուտը, ճարողիկ իգիթ (քաջ  
ձի հեծնող), անվրեալ նետաձիդ:

Նրա լայն այտոսկրները դուրս եյին ցըց-  
ված գեմքի վրա, տափակ քթի հետ փայլում  
եյին և մի զույգ սև ածուխի նման, կենդանի,  
միքիչ շեղ դրված աչքերը: Տափաստանի յերի-  
տասարդ անգղի նման, Ունգարկան շատ հեռու  
յեր տեսնում: Նրա լայն բերանը լիքն ե անսխալ  
կերպով իրար հավասար, փրփուրի նման սպի-  
տակ, առողջ ու գեղեցիկ առամներով:

Անտպատի յերկշուաթ թոչունի նման Ունգար-  
կան խուսափում եր մարդկանցից և հատկա-  
պես ուռուս (ռուս) կազակներից:

Նա վախենում ե ու խուսափում նրանցից,

վորովհետև շարունակ լսում ե, թե ինչպես կազակները և կատակով և թե լուրջ, թե Ունգարկալին իրեն, թե նրա հորն ու մորը և թե առհասարակ բոլոր կիրգիզներին «շուն», «գամփո», «քութի» յեն ասում:

Ընդհանրապես կազակները կիրգիզներին արհամարհանքով են վերաբերվում, իբրև ստորոտ շներին հավասար ցեղի:

Կիրգիզների առւլը գնացած ժամանակը կազակը իրեն վոչ միայն ազատ ու համարձակ երպահում, այլ և նույնիսկ սանձարձակ ու լրութեն:

Կազակը կիրգիզ-հյուրին իրեն հետ նույն սեղանին չեր նստեցնում:

Գործով կազակի մոտ յեկած կիրգիզը սովորաբար համեստորեն կանգնում եր շեմքի մոտ:

Յերկար ժամերով, մինչև գործը վերջացնելը ծալպատակ նստած, կիրգիզը ծխում եր յեղան յեղջյուրից շինած իր յերկար ծխամորճը և բարակ շիթերով թքոտում եր ճարպկորեն—ատամների արանքով:

Ու յեթե կապակի խելքին փշեր թեյով հյուրասիրել իր հյուրին, ապա տանտիրուհին—կազակուհի—հյուրասիրում եր նրան հենց այնտեղ հատակին նստած և վոչ թե ընդհանուր սեղանի շուրջը:

Այդ բոլորը տեսնում եւ Ունգարկան ու  
ցավ եւ զգում դրանից: Իսկ յերբ կիրակի որերը  
նա իր հոր հետ գնում եւ կազակների զյուղը,  
նա համառությամբ լուսւմ եւ և աչքի տակով  
շարունակ դիտում շուրջը: Իսկ ծերունի կազակը,  
ուղենալով կատակ անել նրա հետ, ասում եւ:

— Ունւու... գայլի ճուտ... ի՞նչ ես շարունակ  
լուսւմ: Այ քեզ, այ քութի:

Ծերունի կազակը չի կարողանում ըմբռնել,  
թե վորքան անդուրեկան ու ծանր են այդպիսի  
կատակները փոքրիկ Ունգարկայի համար:

Այդ կատակների ժամանակ Ունգարկան ա-  
վելի յե կպչում իր աթային (հորը): Նրա փոք-  
րիկ ձեռքն ավելի պինդ եւ սեղմում իր մտրակը,  
վորից նա, բոլոր կիրպիզների նման, յերբեք չի  
բաժանվում:

Աև ածուխները—նրա աչքերը վառվում են  
վիրավորված մարդու աչքերի կրակով:

Զաման ուռուս(ոռուս վատն ե...),—շշնջում  
եւ Ունգարկան: Ծանր եւ Ունգարկայի համար, ու  
նա ցանկանում եւ վորքան կարելի յե շուտ դուրս  
սլքծնել այդ զյուղից դեպի իր հայրենի տուլը,  
ուր փոչփոք նրան այդպես չի տոիլ և չի վիրա-  
վորիլ:

Այնտեղ նրան կհանդիպեն իր սիրելի անայի  
(մոր) վաղաքշանքները: Մայրը նրան կումիս

(ձիու կաթ) կխմեցնի, մոխրի մեջ թխած լավաշ կտա: Այստեղ ե նրա սիրելի շունը՝ կարան... Նա այստեղ ընկերներ ունի, վորոնք հասկանում են իրեն, և վորոնց հասկանում ե ինքը:

Իրենց կանաչ Ռւգլայում նրանք ապրում եյին տափաստանի ճնճղուկի նման, դուրս եյին թռչում կիրիտկաներից (վաչկատուն ժողովուրդների շարժական վրաններ, վորոնց հիմնական մասը փայտից ե և ծածկում են կաճյայով—քեչայով), հենց վոր ծագում ե արել և տուն են դառնում միայն այն ժամանակ, յերբ արեն իր զիշերային հանգստին ե գնում:

Ամառվա յերկար որերին Ռւնգարկան ու իր ընկերները կարողանում են վաղվզել ամբողջ մեծ ռւգլայի չորս կողմը:

Առավոտը Ռւնգարկենց կիրիտկի մոտ սկ սարյակների—փոքրիկ կիրդիզների—մի յերամ ե հավաքվում, և առանց յերկար մտածելու, արագությամբ արշավում են դեպի մարզագետինները, այստեղ զանազան քաղցր բաններ ու սընունդ հավաքելու—թրթնջուկ, կծմուկ, սունկ, սուելղին և ելի ուրիշ տեսակները, վորոնցով այնքան հարուստ ե Կուերդարկին Ռւգոլը:

Մարդագետին համսելով սկ սարյակ կիրդիզաճետերը հանկարծ կորչում են անհետ: Այստեղ խոտն այնքան խիտ ու բարձր ե, վոր նըա

մեջ թագնվում, չեն յերևում վոչ միայն հասակավոր մարդիկ, այլ և նույնիսկ լծված ձին ու նրա սայլակը...

Իսկ ծաղիկները, բուրավետ, գեղեցիկ ու բազմազան ծաղիկներն այնքան շատ են, վոր վոչ հաշվել կլինի, վոչ քաղել։ Մարդ կարծես ուզում և ամբողջ կյանքը հիանալ դրանցով։ Կիրդիզանետերի աչքերն այդ ծաղիկների փայլից ավելի յեն բոցավառվում, ու նրանց արեառ ծիծաղկոտ գեմքերն ավելի յերջանիկ են դառնում։

Բայց ահա արեն ավելի վեր բարձրագավ։ Բաց յերկնքի տակ—մարդագետնում շոգն սկսեց, ու Ռւնդարկան իր սկ յերամով թռչում ե դեպի գետը։

Այստեղ արդեն կիզող արեկց թագնվելու և հանգստանալու տեղ կատ.

Այստեղ հովիտը ծածկված ե գանգրավոր ուռենիներով, կուցած ու պինդ ծփիներով, մութ-կանաչ լաստենիներով, թրթուն տերեներով ծածկված բարդիներով, բուրավետ հաղարջենիներով, յերեք գույնի կարմիր, սկ ու սպիտակ—«գաւը պտուղ»-ներով, գեղեցիկ ձարխոտերով, բարակ, գբավիչ հոտ ունեցող, բայց խստությամբ ծակող մասրենիներով, կանաչ ու սաստիկ ալրող յեղինջով և ուրիշ բույսերով, ու

այդ բոլորն այնպես եյին հյուսված բաղեղով  
ու վայրի գայլուկով ու այնպես խիտ ու ի-  
րար մոտ աճած, վոր այդ բոլոր բույսերը մի  
տեսակ կանաչ պատ եյին կազմում, վորի միջով  
չափազանց գժվար եր անց կենալը:

Բայց մի անգամ Ունգարկաս իր մոր հետ  
այդ թափուտում ուղղակի ձեռքերով մի անգղի  
ճուտ բռնեց:

Ճանկանալով բերանը քաղցրացնել թոշուն-  
ների մանրիկ ճուտերի մսով, վոր այդ թփուտ-  
ներում շատ են լինում, անզգուշ գիշատիչը  
այնպես եր խճճվել բույսերի այդ կծիկի մեջ,  
վոր կենդանի կերպով յերջանիկ Ունգարկայի  
ձեռքն ընկավ: Ունգարկայի և նրա ընկերների  
համար այստեղ ել արգելքներ ու խոշնդուներ  
չկան:

Կիրգիզաճետերը համարձակ ու վճռական  
կերպով ճեղքում են այդ թափուտները և միայն  
մասրենու խայթոցից ու յեղինջի ալրոցից դաղ-  
ված, ծիծաղելով կրկնում են՝ ույրայ, ույրայ...

Կիրգիզաճետերն այստեղ հաղարձ, մոշ են  
քաղում: Յերիտասարդ անզների նման, նրանք  
այստեղ թոշունների բներ են փնտուում և ձվա-  
ներ են հավաքում: Իսկ յեթե փոքրիկ ճուտեր  
են պատահում, դրանց ել վերցնում են՝ ուտելու  
համար:

Բայց ահա կիրգիզանետերին թփուտներն  
ել ձանձրացրեցին:

— «Իլեկ հայդա» (գնանք իլեկի մոտ), — ընկերներին հրաման եւ տալիս Ռւնդարկան: Ու սեյերամբ նորից միասին ու ուրախ, իրար առաջ կտրելով, թռչում եւ դեպի զարմանալի քնքուշուաք գետը, վորի մեջ լողանալը մի արտասովոր գուրեկան բան եւ:

Աշխատելով իրար առաջ կտրել, կիրգիզանետերը վազելիս հանում են՝ իրենց շապիկները, փոխանները ու վազելով ցատկում են ջրի մեջ: Դելփինների նման նրանք յերկար ժամանակ խաղում են ջրում: Ցերը ջուրը ձանձրացնում եւ նրանց, նրանք գետից գուրս են գալիս ափի մաքուր, շիկացած, դեղին, ցրվող ավազի վրա, վոր յերբեմն այնպես եւ կեծանում, վոր կիրգիզանետերը հենց վոր վոտիկները դիպցնում են, յետ են թռչում ու հետո նորից թաղվում են ավազի մեջ մինչև գլուխները.

Ինչպես ահազնատես հսկաների գլխարկների վրա թառած վոգիներ, դեղին ավազի վրա, ուղիղ մինչև ջուրը տարածվել եյին ցածրիկ կանաչ, գորշ, լայնատերև կռատուկները:

Ռւնդարկան ու իր ընկերները կռատուկներին ել հանգիստ չեն թողնում:

Կիառատ տաքանալով ավազի մեջ, Ռւնդար-

կան անսպասելի կերպով վեր և թռչում և ա-  
րադ վազում և գեղի կռատուելը: Կռատուելը  
պոկում և և նրանով սկսում և շփշփացնել ա-  
մենքից մոտ յեղող ընկերոջը: Վայրիենապես  
վեր են թռչում բոլորը, և սկսվում և կռատու-  
կակոփիլը: Հետո նորից ջուրն են թափվում, նո-  
րից ավազի մեջ խրվում: Հետո շելթանների նման  
ու տիղմ են քսում իրենց մարմնին, դլուխներն  
ու գոտիները զարդարում են կռատուեներով և  
յերկար ժամանակ ավազի մեջ վազվզում են ի-  
րար յետելից, հալածում են իրար: Իսկ յերբ  
հոգնում են, նորից ջուրն են թափվում, ու վեր-  
ջապես հագնվում են ու հայդա գեղի փոկուուե-  
նիները:

Իլեկի ափով, կաղակների տեղերի նման  
տարածվում է միակերպ, որածայր սպիտակ ու  
մութ-կանաչ փոկուուիների անտառը, յերիտա-  
սարդ ու ծերացած ծառերը իրար հետ խառը:

Ճկուն ու ամուր ճեռքերով Ռւնդարկան ու  
իր ընկերները կոտրտում են յերկար ու կարճ  
ճյուղեր: Բայց նրանց տաք դլուխների կարծի-  
քով դրանք ամենեին ել ճյուղեր չեն, դա ամե-  
նեին ել անտառ չե:

Դրանք ձիաներ, մտրակներ ու սրեր են:  
Իսկ նրանք իրենք ամենեին ել փոքրիկ կիրգի-  
զաճետեր չեն, այլ անհաղթելի ու աներկյուղ

հեծելազոր։ Իրենց արագավաղ, կանաչ ձիաները թամբելով ու զինվելով տեղերով, սրերով ու մորակներով, Ռւնդարկայի անհաղթելի զորքը սլամում եւ տափաստանով, ուր անխնա կերպով իր ճանապարհին վոչնչացնում եւ բոլոր թշնամիներին, թոյնելով նրանց գլուխները. այս ու այն բույսի ծայրերը։

Բայց ահա տափաստանում մի թեթև ըստվեր սահեց։ Հով փչեց։ Արեգակը գնաց հանգըստանալու, և հաղթական, յերջանիկ հեծելազորը վերադառնում եւ առւլը, ուր նրան սպասում են ծնողները, քնքուշ շները, ծանոթ վոչխարները, ուզտի ճուտերը, փոքրիկ քուռակները, այլև ընթրիքն ու անուշ քունը։

Իսկ առավոտյան ելի նոր հնարքներ, նոր խաղեր ու արշավանքներ...

Այդպես եյին Ռւնդարկայի ամենավաղ վուկեւ տարիները...

Ռւնդարկան դեռ ման գալ չգիտեր, վար հայրն սկսեց նրան ձի նստել սովորեցներ։ Զին կանգնած ե։ Հայրը վորդուն նստեցնում ե ձիու մեջքին ու իր ձեռքերով բռնում ե թանգաղին վորդուն։ Յեկ ուրախ են, և դուք ե գալիս յերկուսին ել։ Ու ինքը՝ յորդա Ջրիկոն ել անչափանսահման բավական կանգնած ե ու միայն պոչն ե շարժում ու ճանձրացնող ձիաճանճերին քշում։

Հետո հայրն սկսեց Ունդարկային իր հետ ձի նստեցնել, իր առջեր թամբի ծայրին նստեցնում եր և ձախ ձեռքով սահնձի հետ նրան ել բռնում:

Ավելի ուշ, Ունդարկան արդեն հոր յետեն եր նստում և ձեռքերով բռնում հոր ջիրուզը (շորը), ու այդպես նրանք զնում եյին դյուզերը:

Ունդարկան յոթ տարեկան հասակում իւկական իգիթ դարձավ:

Նա ամեն տեսակ ձի նստում եր:

Նա սովորել եր նաև ուղտ հեծնել:

Յերբ առւլում ջիրիթ եյին սարքում (ձիարշավ), Ունդարկան իր յորդա ձիով միշտ տուաջինն եր գալիս:

Այն ժամանակ Ունդարկայի թևին մեծ, կարմիր թաշկինակ եյին կապում (առաջին մրցանակ) ու Ունդարկան մյուս ձիավորների հետ բերկրանքով դեռ յերկար ժամանակ ձի յեր խաղացնում, վոր դիտում եյին բոլորը, ու հրճվում եյին հայրն ու մայրը:

Հենց այդ ժամանակ Ունդարկան սովորեց իր հոր ու մոր լավ ողնականը լինել: Նա գիտեր խնամել անասուններին,—կերակրել, ջուր տալ նրանց: Ուրիշ աշխատանքներ ել գիտեր:

Տափաստանի քամին հիանալի յեր յերգում եր յերկար, միակերպ յերգը:

Զվարթ ծիծաղում եր արեի տակ սպիտականեր փետրախոտը, շփելով իր յերկար մոռաքը...

Լավ եր ապրում Ունգարկան, քանի դեռ տափաստանի չար մըրիկը չեր հասել նրան—չար մըրիկը, վորի մեջ շեյթանն ե գալիս՝ հիվանդություններ ու չարիք հասցնելով կիրգիզներին:

Սև ծաղիկը մի տարվա մեջ դերեզման իշեցրեց առաջ Ունգարկայի մորը, ապա և հորը:

Իննը տարեկան Ունգարկան միանգամայն վորք մնաց: Հորից մնացած անտեսությունը խորամանկ հորեղբայր Կանալիշկան կարողացավ իր ձեռքն առնել—սեփականացնել: Իսկ Ունգարկան բայզուշ դառնալով, անցավ իլեկի աջ ափը, և կազակների գյուղում հովիվ դարձավ—վոչխարներ արածեցնելու:

\* \* \*

Տափաստանի յերկու բարեկամ ընկերները—անտանելի տոչորող արեգակը և ամեն ինչ չորացնող անհանգիստ ու անդադար քամին, վորանընդհատ փչում ե ամառվա ամբողջ յերկար որը և ավաղի թմբեր ե կազմում—վերջապես հանգստացան:

Արել մայր մտավ: Թամին հանկարծ լոեց, ինչ-վոր տեղ անհետացավ: Կարծես գետնի տակն անցավ: Կարծես իսկի, չեր ել յեղել: Մի-

այն նրա բարեխիղճ աշխատանքի պարզ հետքերը  
մնացին, այն ե՛ ավագի յերկար շերտերը և կար-  
ծես իշխանության գալու պատճառով մաքուր  
տվելած, իստակած ճանապարհը, ուր վոչ մի  
կեղտ չկար: Բոլոր առարկաները, վոր ցերեկվա  
շոգից ու տոթից, յերեսին խփող ավագից շնչառ  
ու մեռած եյին, ուշքի յեն գալիս, շնչում են  
թեթևացած և իւրացիորեն սկսում են նայել  
աշխարհին, յերեկոյան հովի առներ:

Գյուղի փողոցում, ուր ցերեկը կարծես կա-  
տարյալ մեռելություն եր տիրում, վորովհետեւ  
բոլոր տների պատռհաններն ու փեղկերն ել  
փակած եյին, և վոչվոք չեր ուզում յերեալ,  
սկսում են կենդանի և առույդ մարդիկ յերեալ:

Լսվում ե յերեկոյան խոսակցություն:

— Արդեն ժամանակ ե վոչխարի հոտի գտ-  
լու, — ասում են հոդատար կազակ-տանտիրուհի-  
ները, կանգնելով բացված դռնակների մոտ և  
նայելով դեպի տափաստանը, վորտեղից պետք ե  
դա վոչխարների հոտը:

Հոտը դեռևս չի յերեսում:

Կազակ կանայք զրուց են անում:

— Շուն Ունդարկան լավ հովիվ ե:

— Աղջի՛, գիտե, թե ինչպես պետք ե տնա-  
սուններն արածացնել:

— Սանամայր, հենց ծեզում ե, քշում է  
հոտը և ամենքից երտեղ ե բերում:

Տափաստանի կողմը փոշու մի մեծ ամպ  
և յերեսում և ուղիղ փողոցի ուղղությամբ շարժ-  
վում։ Հոսք գալիս ե... Հոտը գալիս ե... Բայց  
փոշու ամպի մեջ դեռ վոչինչ չի կարելի ջոկեր։

Կանայք ու զեռահաս յերեխաները, վոր ոգ-  
նում են նրանց, հավաքվեցին և ուշադրություն-  
ները լարեցին։ Դոնակները լայն բաց արեցին և  
նայում են, վորապեսզի իրենց վոչխարներն անց  
չկենան։

— Թե չե, հետո վազի՞ր... փնտուիր ուրիշ-  
ների բակում։

Փոշու ամպն արդեն մոտեցավ փողոցին, և  
այժմ ամեն բան կարելի յե տեսնել։

Վերեսում կախված ե բարակ, փափուկ փո-  
շին, իսկ նրա տակը հաստ, միապաղաղ պատի  
նման տռաջ ե շարժվում վոչխարների ու այծե-  
րի բրդու զանդվածը։

Կենդանիներն իրենց տերերից պակաս չեն  
հուզվում։ Խնչպես յերեսում ե, նրանք ել չեն ու-  
ղում իրենց բակի տեղ ուրիշ բակ ընկնել։

Անվերջ լսվում են զանազան ձայներ։ Պա-  
ռավ մաքիներն իրենց գառնուկներին են կան-  
չում, մորից յետ մնացած գառները խղճալի բա-  
յում են։

Ամբողջ փողոցն առաջընթաց ե, իրար անց-  
նում։



Կամաց-կամաց փոշու ամպի տակից բրդե  
զանգվածը բաց դռնակներով սկսում ե անցնել  
բակերը:

Դռնակների մոտ կանգնածները զանազան  
ձայներով անընդհատ կանչում են.

— Տյու... տյու... տյու... բարա, բա... բա...

Հոտի առաջից, յերիսը հոտին արած, վոչ-  
խարների անմիտ հոսանքը պահելով, գալիս ե  
արևառ, ամբողջովին փոշեթաթախ Ունգարկան:  
Նրա հագին շապիկ չկա: Նրա հագին միայն հին,  
քրքրված, խունացած բրդե շալից շալվար կա:  
Նրա ձախ ձեռքին մի յերկար մահակ կա, վոր  
նա շարժում ե վոչխարների վրա: Աջ ձեռքին՝  
մի կարճ ու հաստ կոթով յերկար յերեք արշի-  
նանոց մտրակ:

Անփորձ մարդը յերբեք չի կարող բանեց-  
նել այդպիսի մտրակը:

Ունգարկան շատ վարժ ե: Ունգարկան մըտ-  
րակի կոթը միքիչ գլխից վեր բարձրացնե-  
լով, մտրակին այնպիսի արագ ոճաձեւ շար-  
ժում ե տալիս, վոր մտրակն ուժեղ տրաքոց ե  
հանում, վորից հոտը միանգամից խաղաղվում ե:

Իսկ անհնազանդ վոչխարին Ունգարկան  
հեռվից կարող ե իր մտրակով հասցնել և լով-  
ցավեցնել:

Ունգարկայի ուսից կախած ե մի հին վո-

շուա տոպրակը, ուր նա իր հացն ե դնում: Գոռ-  
տուց մի փարչ ե կապած՝ ջրի կամ կաթի հա-  
մար: Դլխարկ չունի: Ահա հովիվ Ունգար-  
կայի ամառային ամբողջ հագուստը:

Ունգարկան ամբողջ փողոցի յերկարու-  
թյամբ շարունակ պահում ե վոչխարների հոր-  
ձանքը, մինչև ցրվեն բակերը, ու անդադար  
կըկնում ե.

— ՀԵ հե... հը՛ռռ... հե՛-հե... (սպասիր, մի  
շտապիր) ՀԵ՛-հե... Դոդոշ... ՇԵյթա՞ն...

Ունգարկայի հետ հոտի առջեկց հանգիստ-  
վոր կերպով քայլում ե հանգիստ ու խոհուն նո-  
խազը:

Նրա յերկար, համարյա մինչև գետին հաս-  
նող, սպիտակ, խոշոր սև բծերով բուրդը հա-  
զուստի յե նման:

Նրա յեղջյուրները յերկար են և յերկու ան-  
գամ վոլորված, իսկ մորուքը գյուղական տի-  
րացուի մորուքի յե նման: Նոխազը թափահա-  
րում ե մորուքը և վոչ մի վոչխարի թույլ չի  
տալիս առաջ ընկնել կամ շարքից դուրս գալ-  
իարգը խանգարելու, շարքից դուրս գալու հա-  
մար նոխազը հարու յե տալիս յեղջյուրներով:

Բայց Ունգարկայի ամենահուսատու ողնա-  
կանը նրա մեծ, չալ վոչխարի շունն եր—կա-  
րաշկան: Կարա—կնշանակի նայիր կամ անա:

Ունգարկան այդպիսի անուն եր դրել իր բարեկամ-շանը, վորպեսզի նա անդադար ու արթուն հսկի հոտին և չթողնի, վոր գայլ մոտենա: Ինչպես Ունգարկան ինքը, այնպես ել Կարաշկան ճիշտ ու ազնիվ կերպով կատարում եյին իրենց պաշտոնը:

Արդեն յերկրորդ ամառն ե՝ նրանք արածեցնում են հոտը, և գայլը չի կարողացել նրանց հոտից մի վոչխար փախցնել:

Դրա համար ել կազակները միակերպ գնահատում եյին և Ունգարկային, և Կարաշկային:

Ունգարկան Կարաշկային իր ափից եր բերել: Նա սիրում եր շանը իբրև իր ամենամոտիկն ու հարազատը և յերբեք չեր բաժանվում նրանից:

Ունգարկայի, Կարաշկայի, նոխազ Վասկայի միահամուռ գործակցությամբ, աերերի խմբական կանչով վոչխարները ցըփում են բակերում:

Փոշու ամպը կամաց ու աննկատելի կերպով թագնվեց գիշերային խտացող մթության մեջ:

**Շուտով բոլորովին կմթնի:**

Յերբ Ունգարկան ու Կարաշկան փողոցում յերկուսով մնացին, Ունգարկան թեթևացած շունչ քաշեց և իր յերկար մտրակը հավաքելով, դիմեց գեպի այն տունը, ուր այսոր պետք ե ընթըրել:

Այսոր հերթը Խոտենով հարուստ կուլա-  
կինն եր.

Բակում Ունգարկային հանդիպում ե բարձ-  
րահասակ, յերիտասարդ զեղեցիկ կազակուհի  
Պավլովսան—տանտիկինը:

Նա շատ եր հոգներ: Նա տասնհինգ կով  
պետք ե կթի և խոհանոցում ել գործ ունի:  
Մեծ տնտեսություն ունեն: Պավլովսան հուզ-  
զում ե: Հազար կտոր պետք ե լինի:

Պավլովսան առանց այն ել խոսքի չափը  
չեր ճանաչում, իսկ փոքրիկ կիրգիզի նկատմամբ՝  
ավելի և:

Տան գործի մեջ խեղդվում եր. ու սատա-  
նի պես հովվին ել բերեցին:

Ու Ունգարկայի վողջույնին թե՝ «բարե՛,  
մորաքույր», Պավլովսան խիստ կերպով գոռաց.

— Ո՞վ ե քո մորաքույրն ե... Շանը մեկը...  
ինչի վոչխարն եսպես շուտ բերիր... Զթողեցիր  
կովերը կարգին կթեմ... Դե՛ սպասիր, վոր քեզ  
ուտելու բան տամ... Անյօւտկա... վազիր Պրիտ-  
կովենց տուն: «Կեղտոտ ամանը» բեր և Ուն-  
գարկին լափելու բան տուր,—հրամայեց զայրա-  
ցած կազակուհին:

Ունգարկան լուսմ ե: Նա վաղուց եր հա-  
մոզվել, վոր նման դեպքերում և այսպիսի կա-  
նանց հետ ամեն մի խոսակցություն լոելուց ա-  
վելի վատ ե:

Արդեն յերկրորդ տարին ե, վոր Ունգարկան այդ գյուղում վոչխար և արածեցնում: Նա յուշացրել ե ոռւս կազակների բարբառը և ավելի շատ ոռւսերեն, կազակերեն և խոսում, իր մայրենի բառերն ել խառնելով: Նա վարժվել է կազակներին:

Կազակները զնահատում եյին նրան, իրքելավ հովիվ-ստրուկի: Բայց չնայելով այդ բոլորին, Ունգարկան կազակների համար առաջվանման մնում ե ոտար և շուն...

Նրա անկեղծ անձնվիրության, նրա բարեխիղճ աշխատանքի համար կազակները կերտելում են նրան առանձին, հատուկ «կեղտոտ ամանից»:

«Կեղտոտ ամանը»՝ Ունգարկայի հետ զբունում ե կազակների բակերում: Վորտեղ Ունգարկան, այնտեղ ել—«կեղտոտ ամանը»: Իհարկե, այդ ամանն իրենց մյուս ամանեղենից հեռու եյին պահում:

Նրա սովորական տեղը նստարանի տակի կեղտոտ անկյունն եր, տաշտակի մոտ, ուր աղտոտ ջուր են լցնում: Հարկավոր թեղած դեպքում, յերբ տաշտակում տեղ չի լինում, կազակուհին աղտոտ ջուրը «կեղտոտ ամանի» մեջ ել ե լցնում: Այդ ամանով ել կերակրում են կատվի

դսիսերին, շան լակոտներին, խողի ձագերինոց  
այլն:

Ունդարկան տեսնում է այս բոլորը և ցավ  
և դպում, բայց զնալու տեղ չունիր նա բոլորո-  
վին միայնակ եւ նա ուրիշ աշխարհ չի ճանա-  
չում բացի այդ գյուղից և իրենց առւլից: Վոչ-  
վոք նրան վոչ մի բան չի պատմում: Ունդարկան  
այդ գյուղում վորեե նոր, լավ բան սովորել, ի-  
մանակ, վոչվոքից չի կարող:

Հենց վոր Ունդարկան վորեե լուրջ բանի  
մասին սկսում է հարցուփորձ անել, բոլորը ծաղ-  
րում են նրան:

— Տեսնում ես շանը... ինչեր եւ խոսում...  
ի՞նչ եւ ուզում:

— Քեզ պետք ե կնքել, Ունդարկան... Այ են  
ժամանակ ամեն բան կիմանաս:

— Գնանք մեր մոլլի մոտ... Մեր մոլլան  
իրեն մեշիդում քեզ կկնքի: Յես կնքահայր կլի-  
նեմ, իսկ Պավլովսա մորաքույրը՝ կնքամայր: Քեզ  
համար շալվար, շապիկ կկարենք:

— Են ժամանակ դու շուն չես լինիլ: Են  
ժամանակ դու մերը կլինես—կնքված կլինես...

Ունդարկան վոչինչ չի հասկանում, վոչ այս  
տեսակ կատակներից և վոչ ել այս տեսակ լուրջ  
խոսակցությունից:

Նա դեմ չե ոռւսների մեջիդը (յեկեղեցին) գնալու... նրա խավար ու անհանգիստ միտքը կարծում ե այստեղ կդտնի դեպի լույսն ու ճշմարտությունը տանող ճանապարհը...

Մեկին հաջողվեց Ունգարկային յեկեղեցի տանել, վոր սաստիկ վրդովեց ու զայրացրեց ծեր կազակներին ու նրանց կանանց:

Սև բգեզը կանգնել եր ուղիղ բեմի առջևը, լուրջ, շատ լուրջ...

Նա իր ածուխ աչքերը հառել եր ոռւս մոլլային: Աչք չեր հեռացնում նրանից: Նայում ե, թե ինչ ե անում մոլան, բայց վոչինչ չի հառ կանում:

Ունգարկայի հասակի կազակաճետերը հրում են նրա կողքին, ծիծաղում և շշնջում եյին նրան.

— Կնքվիր, Ունգարկա... կնքվիր...

Ունգարկան քարացած, լուրջ, խիստ ու առանց վորենե շարժում անելու կանգնած եր:

Բարեհոգի ծեր կազակները նայում են Ունգարկային և մտածում իրենք իրենց.

— Տես ե, շունը վորտեղ ե յեկել: Կարելի յե, ճիշտ վոր, կնքվի...

— Ես ի՞նչ ե, աղջի, տերտերն ինչի յե ես

անկըռն մուսուլմանին յեկեղեցի թողել, — շշնջում  
ին յեկեղեցում հարևանուհիները:

— Միայն բարի մարդկանց մեղքի մեջ ե  
պցում:

— Պետք ե քեզ ամուսնացնել, Ունգարկա:  
են ժամանակ շուտ-շուտ արադ կխմենք...

Այս եյին կազակների կատակով ու լուրջ խո-  
սակցությունները շուն-Ռւնգարկայի հետ:

Յեկ Ունգարկան առաջիւ պես մենակ եր.  
նրա ընկերներն եյին միայն Կարաշկան, նոխազ  
վասկան և «կեղտոտ ամանը»...

«Կեղտոտ ամանից» ընթրելով, Ունգարկան  
ու Կարաշկան գնացին ծածկի տակ քնելու: Հոգ-  
նած Ունգարկան թրմփալով ընկնում ե թարմ  
խոտի վրա: Կարաշկան կուչ ե դալիս նրա կող-  
քին:

Ունգարկան յերկար ժամանակ հիանում է  
քնքուշ թափիշ յերկնքով և պայծառ, փայլփլուն  
աստղերով, վորոնք կարծես վորձում են Ուն-  
գարկայի հարցերին մի բան ասել: Բայց ե՞ն,  
նրանց պատասխանը շուտ չի հասնիլ Ունգարկա-  
յին:

Յերկրի վրա նա ավելի շուտ կստանա իր  
հարցերի պատասխանը՝

— Թե ինքն ինչու յե մենակ: Ինքն ինչու

յե շուն: Ինչու յեն նրան «կեղտուտ ամանից» կերակրում, ինչու յե ինքը բայզուց:

Կարաշկան քնի մեջ վեր ե թոշում, Ունդարկան շոյում ե նրան:

Անբաժան բարեկամների քունը կարճ է: Հենց վոր առաջին արծաթե շերտը փայլում ե արեելքում, Ունդարկան ու կարաշկան վոտքի վրա յեն: Առավոտյան թարմ ողից կծկվում են նրանք:

Կարաշկան, մեջքը սաստիկ կուցնելով, քաղցրությամբ ձգվում ե իր ամուր վոտքերի վրա, քաղցր քնից հետո ամբողջ յերախով հորանաջում ե և ուղում ե լիզել Ունդարկային:

Յերերուն սանդուխքով իջնում ե Ունդարկան: Կարաշկան մի վոստյունով կանգնում է գետնին: Կազակուհին Ունդարկային մի բոքոն ե տալիս, պաքսիմատ ե լցնում նրա տոտրակը, իսկ նրա փարչը քամած կամ թթված կաթն ե լցնում:

Յերեկվա պես Ունդարկան կատարելապես զինված ե,—մտրակը, մահակը ձեռքին են, տոտրակն ու փարչը վրան:

Ամբողջ հոտը փողոցում հավաքելով՝ Ունդարկան մինչև արեկի դուրս գալը քշում ե զյուղից դուրս, զովացած, զիշերը ցողով թարմա-

յած տվագի վրայով — դեպի ընդարձակ, դմբուխան տափաստանը:

Տափաստանում Ունդարկայի զլխավոր հողմնե, — ըսկ կշաացնել վոչխարներին և թույլ չտար վոր գայլը վոչխար խեղդի:

Իսկ յեթե վոչխարներից մեկը գառն ե ծնում, նա պետք ե շալակած տռւն բերի:

Այսպես ե անցնում դյուղում Ունդարկայի հովվական կյանքը:

\* \* \*

Գալիս ե առաջին ձյունը...

Տափաստանն սպիտակ ծածկոց ե հագնում: Ել ճանաչել չի լինիլ տափաստանը: Այստեղ ամեն բան փոխվել է: Նոր կյանք ե սկսվում: Չմեռն ե գալիս:

Հոտն ել դաշտը չեն քշում: Վերջացավ նաև Ունդարկայի հովվական աշխատանքը — մինչև դարուն:

Վորեւե հարուստ կաղակ ձմեռն Ունդարկային սիրով վարձում ե իր «անասունները պահելու» ախոռներում (տներից առանձին անասունների բակում):

— Եսպիսի բալիշկին (յերեխային) վարձելը ձեռնտու յե, — խորհրդակցում ե կաղակն իր կիոջ հետ:

Նա աշխատասեր յերեխա յե... Շատ չնշին վարձ կարելի յե տալ... Մի հին շոր կտանք, մի խալաթ, մի վորեե գլխարկ, մի զույդ մաշված բրդե ձեռնոցներ, մի վորեե հասարակ կտորից շապիկ ու փոխան...

— Դե ինչ խոսք...—ինքնաբավական ու տափակ համաձայնում ե գեր կազակուհին:

— Իսկ ուտելիքի վերաբերմամբ կիրդիզ յերեխային պահելը քեզ համար շատ ավելի հեշտ կլինի, քան թե ոռուսին...

— Ռուսը միշտ պետք ե լավ ու վատ անի և չհավանի... Իսկ ես շունը... Ինչ տաս, կուտի:

Թված այս կարողության, վոր տրվում է Ունգարկային միայն ձմեռը և այն ել մինչև այն ժամանակ, յերբ նա «պահում ե» անապուններին, կազակը համաձայն ե ելի ավելացնել մի բան:

— Ե՛, գե, յեթե սաստիկ ցուրտ կլինի, կարելի յե մի մաշված մուշտակ ու մի վորեե քեչե վոտնաման ել տալ...

Այս պայմաններով, տասը մանեթ ել վրան ավելացրած, Ունգարկան վարձվում ե մասնավոր մարդու մոտ աշխատելու:

Զմեռն Ունգարկան ու կարաշկան տեղավորվում են հարուստ կազակի ախոռների մոտ յեղած գետնափոր խրճիթում:

Ու ելի, ամառվա նման, շատ վաղ առավետից մինչև ուշ գիշեր, Ունդարկան զբաղված ե անսասուններին պահելով։

Որական յերեք անդամ անսասուններին կերպեաք ե տալ, Յերեք անդամ՝ անսասուններին պետք ե քշել Իլեկ—ջուր տալու։

Պետք ե բակը մաքբել. պետք ե անցքերը մաքբել։ Պետք ե կ'առել գետնափորի ոջախը, վորպեսզի վորքիկ ու քնքուշ գառները չսառչեն, և վորպեսզի ինքն ել տաք քնի խոնավ, կեղտոտ ու հոտած գետնափորում։

Ու այս բոլորն Ունդարկան կատարում ե բարեխղճորեն։ Իսկ մշտական մտածմունքներն տուաջվա նման նբան հանդիստ չեն տալիս։ Նրա մտածմունքներն ել ավելի լարված ու անհանգիստ են, վորովհետեւ աչքաբաց Ունդարկան սկսել ե նկատել, վոր գյուղում ինչ-վոր շարժում կա։

Յերիտասարդ ու ծեր կազակներն սկսել եյին ավելի հաճախ ու ավելի խիստ հայհոյել միմյանց։ Սկսեցին Ունդարկայի ականջին հասնել բոլորովին նոր, զյուղում յերեք չլսված խոսքեր։ Կազակներն սկսել եյին իբար հետ ավելի հաճախ հիշել սպիտակներին, Լարմիր բայլշիկներին։ Յերիտասարդ կազակները կարմիւ-

ների կողմն ելին, ծերերը՝ սպիտակների։ Ծերերի և յերիտասարդների մեջ բանն սկսեց կռվի հասնել։ Ծերերն սկսեցին ավելի ու ավելի հաճախ անիծել յերիտասարդներին։ Սպառնում եյին հողից զրկել նրանց։ Յերիտասարդներն այդ բաններից չեյին վախենում։ Պինդ կանգնած եյին իրենց ասածին, և սպառնում եյին միայն մի բանի, թե յերբ կզան կարմիրները...

Ունգարկան դեռ վոշինչ չգիտեր ու վոշինչ չեր հասկանում, բայց նա ել հաստատապես վովոշել եր սպասել կարմիրների գալուն, իր սրտում գուշակելով և հույս ունենալով, վոր կարմիրներն ամեն բան կբացատրեն նրան։ Բայց Ունգարկային վիճակված չեր տեսնել կարմիրների գալը—կազակների գյուղը։

Կարմիրների դալուց քիչ առաջ Ունգարկան տիֆով հիվանդացավ և այժմ բոլորովին անտեր՝ պառկած եր գետնափորում ոջախի մոտ անկյունում, ինչ-վոր կեղտոտ լաթերի վրա։ Միայն կարաշկան եր, վոր չեր հեռանում նրանից—ախոռից ու գետնափորից։ Անասուններին արդեն ուրիշ բանվոր եր հսկում։ Կազակը դրժգոհ եր, վոր Ունգարկան հիվանդացել ե, տանտիկինը խղճալով ուտելու մի բան եր ուղարկում հիվանդին։ Ունգարկան ուտել չեր կարող։ Յերբ առաջին անգամ կարմիրները գյուղը

մտան, Ունդարկային գետնափորում զառանցելիս զտան: Կարմիրները մյուս հիվանդ յերեխաների հետ Ունդարկային ել վերցրին և ուղարկեցին ամենամոտ նահանգական հիվանդանոցը...

Ճգնաժամը բարեհաջող անցավ: Առաջին բոպեն ե... Ունդարկան աչքերը բաց պառկած ե: Զարմացած այս ու այն կողմն ե նայում: Անվլատահ ու թույլ, նիհարած ու սպիտակած ձեռքով շոշափում ե մահճակալը, ինքն իրեն... Կարծես թե ուզում ե համոզվել, թե եղ ի՞նքն ե, թե ինքը չե... Վոչինչ չի կարողանում հասկանալ... «Բիլմայ... բիլմայ... բիլմայ...» (չգիտեմ, չեմ հասկանում), կամաց շշնջում եր նա չորացած շրթունքներով: Յերբեք Ունդարկան վոչ մի այդպիսի բան չեր տեսել իր կյանքում, նույն իսկ յերազում: Սպիտակ, մեծ, բարձր լուսավոր սենյակ եր: Իրեն Ունդարկայի հագին այնպիսի սպիտակ ու մաքուր սպիտակեղենն կար, վոր նա չեր հագել նույնիսկ այն ժամանակ, յերբ դեռ կենդանի յեր նրա սիրելի անան... Նա պառկած եր սպիտակ, մաքուր մահճակալի վրա:

Նրա կողքին, ելի այդպիսի մահճակալների վրա պառկած են ելի շատ բավեշիներ - ոռուներ, կազակներ և ելի ուրիշ նոր ազգի յերեխաներ, վորոնց Ունդարկան չեր պատահել իր առփաստանում:

Պառկած ե Ունգարկան, թագ ե կացել, չի շարժվում ու լարված մտածում ե. «Ես ով ե ես բոլորը իրեն համար արել... Ու դեռ ելի ինչ պետք ե լինի»:

Գլխին սպիտակ թաշկինակ կապած, սպիտակ գոգնոցավոր մի հանգիստ ու բարի մորաքույր մոտենում ե Ունգարկային։ Փափուկ, քնքուշ ձեռքով, ինչպես իր հարազատ անան, շոյում ե նա Ունգարկայի չոր, սև գլուխը և ուրախ ու սիրով ասում ե.

— Վոչինչ... վոչինչ, տղաս... Այժմ ամեն ինչ լավ ե... Շուտով բոլորովին կառողջանաս...

Հետո Ունգարկային մոտենում են ինչ-իոր քեռիներ, ելի սպիտակ շորերով ու աչքներին ակնոցներ։ Ձեռնահարում են Ունգարկային ամեն կողմից, ինչպես նրա աթան ձեռնահարում եր ձի կամ կով գնելիս։ Քնքուշ ու բարի նայում են նրան։ Ձեռք են տալիս, հետո թխկացնում են փորին կամ մեջքին շատ կամաց-կամաց... Ծիծաղում են... Ասում են.

— Կեցցես, իդիթ... Շուտով բոլորովին կառողջանաս և գուրս կդաս հիվանդանոցից։

Իսկապես Ունգարկան շուտով լավացավ։ Ու նաև դեռ հիվանդանոցից գուրս չեր յեկել

յերբ մինչ այդ նրա համար անհասկանալի շատ  
բան եր բացվել, պարզվել:

Հիվանդանոցում նա արդեն վոչվոքից չեր  
բռում «շուն» խոսքը: Այժմ նա արդեն ուտում  
և խմում եր նույնը, ինչ վոր մյուսները և բո-  
լորովին նույն տեսակ ամաններից, ինչ վոր  
մյուսները:

Ունգարկային բոլորն ել այլ կերպ չեյին  
ասում, քան իր իսկական անունը—Ունգար:  
Հետք խոսելիս հաճախ ընկեր խոսքն ել ավելաց-  
նում եյին:

Նրա բոլոր հարցերին, ինչքան ել վոր տա-  
րորինակ կամ նույնիսկ վայրենի լինեյին, միշտ  
Ունգարկային մանրամասն բացատրություններ  
եյին տալիս: Վոչվոքի մտքով չեր անցնում  
ծաղրել տափաստանի վայրենի յերեխային, վոր  
առաջին անգամն եր տեսնում աշխարհը:

Ունգարկան քաղաքի տների մասին վոչ մի  
հասկացողություն չուներ: Հիվանդանոցի պա-  
տուհանից առաջին անգամ յերկհարկանի տուն  
տեսնելով՝ հիացած աղաղակեց.

— Տես... տես...! տան վրա տուն կա...

Որեցոր աճում եր Ունգարկայի գիտակցու-  
թյունը: Շատ բան, վոր առաջ անհասկանալի

եյին նրան, այժմ պարզվում եյին։ Նա խմացավ,  
թէ ինչպես և ում շնորհիվ ե նա ընկել հիվան-,  
դանոց ու կենդանի մնացել։ Ունդարկան անսահ-  
լի չափով շնորհակալ եր իրեն փրկողներից ու  
միայն ափսոսում ու վշտանում եր, վոր նրանք  
Կարաշկային ել չեն վերցրել։

— Կարաշկան ջեկ (Կարաշկան չկա)… — վըշ-  
տանում եր Ունդարկտն։

Նա անսահմանորեն ցանկանում եր իր կյան-  
քին ու յերջանկությանը բախարակից անել Կա-  
րաշկային։

Իր մանկական ու նախնական ամբողջ  
եյությամբ Ունդարկան զգում եր, վոր վերջի-  
վերջո նա այն մարդկանց մոտ ե ընկել, վորոնց  
կարոտում եր նրա մանկական սիրտը տափառ-  
տանում և զյուղում։

Ունդարկան այժմ հաստատ համոզված եր,  
վոր նա ամենախկական տեղումն ե, և վոր նրա  
կյանքը սրանից հետո այլ կերպ կընթանա։

Նրա հարուստ յերևակայությունը նորից  
սկսեց ցնորքներ հնարել, ինչպես մի ժամանակ  
առւլում իր մանկության վոսկե տարբիներին—  
իսկ սիրտն սկսեց բաքախել բոլորին յերջանկաց-  
նելու ցանկությամբ…

Նոր, լուսավոր կյանքը, վոր բացվել եր  
մենգարկայի առջև իր անսահման խորությամբ  
ու լայնությամբ, ինչպես իր հայրենի տափառ-  
տաներ,—նրա համար շատ անտեխնիալներ եր  
պատրաստում...

Ամեն մի նոր որ նրա համար, վոր նոր եր  
բան հասկանում, մի նոր հրաշք եր բերում:



1882

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045501

ԳՐԱԸՆ 10 ԿՈՂԵԿ

(104.)

567  
A —  
8496

В. Покровский

Унгарка